

շատերէն, կոտորածի միջոցին վանքին տանիքէն իւր ժողովրդին սոսկալի փիճակը ու կոտորածը դիտելով կուշար ու կազօթէր, մի քանի գնտակներ նետած էին իրեն, բայց բարեբախտաբար վրիպելով գնտակներէն ոչ մէկը չէր զգած իրեն: Սրբազանը վախնալով որ մի գուցէ բարբարոսները զինքը շարժելով մեռցունեն, անմիջապէս իւր սենեակը մտնելով իւր թևին երակները կը կտրէ, բայց միւթասարքը իմանալով եղելութիւնը, անմիջապէս բժիշկ կը խրիէ փոսնոցին առջևն առնելու համար, բայց բժիշկները կը հաստատեն թէ Սրբազանի կեանքը փոսնոցի տակ է: Վանքը տարուած էին 5—6 աղջիկներ և կիներ պաշտպանուելու համար, որոնք Մահմեդ օնպաշը կոչուած անդուժ սրիկայէն կը պղծուեն: զոր Սրբազանին անձը պաշտպանելու համար զրկած էր միւթասարքը: մեռեալներուն թիւը 6—7000—էն աւելի կը հաշուի, ողջ մնացողներէն օրական 10—16 հատ կը մեռնեն: Թէ իրենց առած վէրքերէն և թէ սոսկալի տեսարանէն սարսափած, Բոլոր հայոց գիակները յանձնուած էր հրէկոյ որոնք վեց օր շարունակ փոսեր բանալով և թըլ ֆըր աւար կոչուած թաղէն երեք ջրհոր լեցուցին գիակներով: Քրիստոսէից բազմաշէն թաղերը ու հոյակապ տուններ աւերակներով լեցուեցան, ոչ ժողովուրդ կայ, ոչ քահանայ և ոչ պատուելի: Աւթը քահանաներէն միայն մէկ հատը ազատուեցաւ: բողբոջականաց պատուելի Ապու—Նայեաթ կոչուած բարի անձը կտոր կտոր ըրին, արականաց դասէն հաղիւ թէ 100—էն 10—ը ազատուեցաւ: շատ կիներ ու աղջիկներ յափշտակուած գերի մարեցան այլ և այլ կողմեր, շատ զօրքերու բերնէն կը լսէինք թէ սուլթանի հրամանը վեց (6) ժամ պակաս մընացած էր, վեց ժամն ալ այս ողջ մնացող վիրաւորեալ գեաւորները պիտի ջարդենք, Եդեսիան աւերակաց կոյտ մը դարձած է, ողջ մնացողներէն ոչ որ չէ կարող գուրս ելնել: կարծես թէ բոլոր թուրք գիւղացիներուն ամասկան կապուած է ճամբան տեսած հայերը մորթելու: Ես այդ աւերակեալ և արիւնաներկ քաղաքէն հաղիւ թէ 8 օրուան մէջ կերպարանափոխ քիւրդի ղզեստով կրցած էի Պէրէճիք հասնել, անկարագրելի տառապանք քաշելով հազար անգամ մահուան փոսնոցէն ազատած էի: Պէրէճիքի փիճակն ալ ճիշտ Եդեսիոյ պէս եղած էր: հոս ալ Եդեսիոյ պէս նախ ղէկերը հաւաքած են, և յետոյ բոլորն ալ ջարդելով Եփրատի մէջ լեցուցեր են: հոս տեղի ունեցած փոքրիկ դէպք մը պատմեմ:

Պարապետ Էֆենդի կոչուած նշանաւոր հայ մը որ տեղւոյն կառավարութեան գատարանի հարցա-

քննիչն էր, թիւրք խուժանը տունը յարձակելով նախ կապանէ ղիւքն և երբ կուղին իւր մէկ հատիկ աղջիկը յափշտակել, խեղճ աղջիկը կը յաջողի ինքզինքը ջրհորին մէջ նետելով խեղդուել, նախամեծար համարելով այս մահը քան օսմանեան զօրքերի և բարբարոսներու ձեռք անցնելը, բոլոր տան բնակիչները, ձեր ու երեխայ բնաջինջ ընելէն յետոյ, խեղդուած կոյսը կը հանեն ջրհորէն և անկնդան մարմինը կը պղծեն:

Ագիամանէն, Մալաթիայէն, Սէվերէկէն եկող թիւրք ճամբորդները սարսափելի տեսարաններ կը պատմէին, եթէ բոլոր տեսնուած ու լսուած եղելութիւնները գրուելու ըլլան, ամիսներու, տարիներու կարօտ են: Եդեսիայէն 2 ժամ հեռի գրտնուոյ և 600 տունէ բաղկացեալ Պարմուրճ գիւղի հայ քաջեր կրցած են դիմադրել իրենց վրայ շորս հինգ անգամ յարձակում ընող զօրաց և բարբարոս թրքերու: վասն զի յիշեալ գիւղացիները իրենց ղէկերը չէին յանձնած խարդախ, խաբերայ, մարդակեր, անիծից արմատ, իժերու զուակք շներուն:



ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ.

ՔԱՂՈՒԱՆՔ Ի ԿՈՆԴՍՏԱՆՍՏԱՆՍՍՈՒՆԻՍՏԱՆԻՍ

Կոնստանտինոպոլիսի հաստատութեան հոգաբարձութեան Եփեղ.— Ժխակ. դպրոցին հայոց Տափի թաղի ս. Գևորգ եկեղեցւոյ Տփխեաց. թ. 537:

— Հաստատութեան հոգաբարձութեան Եփեղ.— Ժխակ. դպրոցին հայոց Ազբիրման քաղաքի. թ. 586:

— Ծանուն Գեր. Տ. Գեորգ արքեպիսկոպոսի թ. 592, զկարգմանէ Տ. Գեղամ վարդապետի ի վանահայրութիւն վանացն հազրատայ:

— Օրհնութեան յանուն պ. Ա. Մանթաշեան թ. 634:

— Հաստատութեան հոգաբարձութեան Եփեղ.— Ժխակ. երկսեռ դպրոցաց Ս. Աւետեաց եկեղեցւոյ Տփխեաց. թ. 666.

— Ծանուն Գեր. Տ. Անանայ եպիսկոպոսի որով արձակեցաւ ըստ խնդրանաց իւրոց ի պաշտամանէ փոխանորդութեան Երևանայ. թ. 677:

— Օրհնութեան յանուն Տ. Ղևոնդ քահանայի Մակու քաղաքի և հոգաբարձութեան ս. Թադէոս առաքելոյ վանից. թ. 685:

— Յանուն Սինոզի Ս. Էջմիածնի թ. 686, զհարգմանէ գործակալին Նոր Բայազիտու ի պաշտօն փոխանորդութեան Հին Եսթիֆեանի ի տեղի Տ. Արսէն վարդապետի և Տ. Սիօն արեղայի ի գործակալ Ն. Բայազիտու:

— Յանուն Ամեն. Ս. Պատրիարքին Կ. Պօլսոյ թ. 687, որով լուծեալ համարի պսակն Գրիգորի Թերզեան ընդ Սանգիտի և վաւերական երկրորդ պսակն նորին:

— Յանուն Ամեն. Ս. Պատրիարքին Կ. Պօլսոյ թ. 688, որով վաւերական համարի պսակ Մարգարայ Օհանեան ընդ Եպրոս կնոջն:

— Յանուն Տ. Յակովբ քահանայի Տ. Անդրէասեան, որով շնորհին նմա կոչումն աւագ քահանայութեան և իրաւունք կրելոյ ի գլուխ իւր զվաճարակայ. թ. 692:

— Յանուն Հայ ժողովրդոց Մանչեստեր քաղաքի թ. 694, զձեռնադրութենէ Տ. Թորոս քահանայի Ջուղայեցոյ և զհարգմանէ նորին ի հովուութիւն ինքեանց:

— Յանուն Տ. Թադէոս քահանայի Աւետիսեան Աշտարակ գեղջ թ. 719, որով շնորհին նմա լանջախաչ քահանայական:

— Յանուն Սինոզի Ս. Էջմիածնի թ. 722 զհարգմանէ Տ. Բենիկ վարդապետի ի քարոզիչ շրջանակին թերակղզոյն յԵրիմու:

— Յանուն Տ. Բենիկ վարդապետի թ. 723 ի նոյն միտս:

— Յանուն կառավարչի թեմին Բեսարաբիոյ Տ. Յուսիկ վարդապետի թ. 724 ի նոյն միտս:

— Յանուն Սինոզի Ս. Էջմիածնի թ. 724 զհարգմանէ Գեր. Տ. Երեսէս եպիսկոպոսի պաշտօն փոխանորդութեան Երեւանայ:

— Օհնութեան յանուն Ստեփանի իւզբաշեան. թ. 746:

— Յանուն Տ. Օգեսնտիոս քահանայի կոպչաձեան Սիմֆերոպոլ քաղաքի, որով լուծեալ համարեցաւ պսակ Գրիգորի Թիւթիւնչի Մատթէոսեան յարբերացոյ ընդ կնոջն իւրում Սինայի կորուսելոյ. թ. 747:

— Յանուն Տ. Կարապետ քահանայի Թիւլպէնձեան, թ. 748, որով շնորհին իրաւունք օրհնելոյ զպսակ Արրահամու Հաջի Վարդանեան:

— Օրհնութեան յանուն Հայ ժողովրդոց Երեւան քաղաքի զհարգմանէ Գեր. Տ. Երեսէս եպիսկոպոսի ի պաշտօն փոխանորդութեան թեմին Հայոց Երեւանայ. թ. 749:

— Յանուն Գեր. Տ. Երեսէս եպիսկոպոսի. թ. 750 ի նոյն միտս:

— Յանուն Տ. Սիօն վարդապետի զհարգմանէ նորին ի պաշտօն գործակալութեան Նոր Բայազիտու. թ. 754:

— Յանուն Սինոզի Ս. Էջմիածնի թ. 764, որով պատուիրի յանձնել Տ. Գիւտ քահանային ուսրիս 5000 վան գնելոյ զապարանական գործիս յարտասահմանէ:

— Յանուն առաջնորդին տեղ. Ատրպատականի Տ. Յովսէփ վարդապետի թ. 785, որով լուծեալ համարի պսակ Զարարայ Եղիաշեան ընդ Սալբիի ի պատճառս անհետանալոյ առն:

— Յանուն առաջ. տեղ. Ատրպատականի Տ. Յովսէփ վարդապետի թ. 786, որով պատուիրի նմա վան շահեցուցանելոյ զԱթոռապատկան կալուածս ի թեմին իւրումն:



ԲՈՎՈՒՆԻԱԿՈՒԹԻԻՆՆԵՐ

ԿՐՕՆԱԿԱՆ — ԲԱՐՈՅԱԿԱՆ.

- 1. ՎԱՐԴԱՎԱՐ . . . Կ. Վ. . . 357
- 2. ԶԱՐՈՋ Ա. Խօսեցեալ ի տօնի Կաթողիկէ Ս. Նշմամնի . Թ. յԲ. Խա. Զուղայեցի . . . 260
- 3. Ս. ԼՈՒՍԱՆՈՐՉԻ ԱՋԸ. Եարոնակութիւն եւ վերջ . Կ. Կոտսանեան . . . 265
- 6. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԶՐՈՆԻՅՈՒՆ . Ե. Զ. . . 272

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ — ՊԱՏՄԱԿԱՆ.

- 7. Ողբ Խաչատրոյ Կեչառոյն վան իշխանացն . 287
- 8. Առարատի իմքարութեան. Եզնիկ Վ. . . 279

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.


- 9. Դերսիմ (Եարոնակութիւն եւ վերջ) Ս. Հայկունի . 280
- 10. ՄԱՆՐԱԼՈՒՐ 282

ԱՋԳԱՅԻՆ.

- 11. Սրբալոյս մկրտնի հանդես 285
- 12. ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅՍՏԱՆԵՑԸ 286
- Մայր Աթոռ
- 15. Երեսնի թեմ
- ՏԱՃՎԱՅԸ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ.

- ԲՈՎՈՒՆԱԿՈՒԹԻՆՆԵՐ
- ՎՐԻՊԻՆԸ
- ՅԱԽԵՆՈՒԹ.
- Առասիա Երրակացի Գ.
- ՄԱՏԵՆՆԻՍՈՍՏՈՒԹԻՆՆԵՐ
- ՅԱՅՍԱՐԱՐՈՒԹԻՆՆԵՐ



Վ Ր Ի Պ Ա Կ Բ

Սպաղբուած է	Պիտի լինի
Երես 241 տող 18—Կրէմլ	Կլին
— 243	
Հանդիսաւոր պատարագից զկնիշանակուած էր Հայրապետական մաղթանք, սակայն Վեհափառ Կաթողիկոսի թեմէն տկարութեան պատճառով տեղի չունեցաւ այդ:	Հանդիսաւոր պատարագից յետոյ տեղի ունեցաւ մաղթանք, սակայն Վեհափառ Կաթողիկոսն իւր թեմէն տկարութեան պատճառով ստիպուած էր մաղթանքից առաջ թողնել եկեղեցին: